ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Համագումարում չափազանց խիստ համարձակ՝ հնչեց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, պատմաբան Յու. Աֆանասևի խոսքը: Ոմանք հին մտայնությամբ փորձեցին, այսպես ասած, հակահարված տալ նրան: Սակայն ճշմարտությունը չես լռեցնի ոչնչով: Մենք ինքներս գիտենք ու համոզված ենք, որ Գերագույն խորհրդի երկու պալատներում ընտրվածների մեծամասնությունը հանդես է գալիս քաղաքական արմատական, գործնական փոփոխությունների դեմ: Ոմանք իրենց դիրքորոշումը փորձում են քողարկել ժամանակը տրանտեսելու, միասնությունը չխախտելու, կուսակցության ու նրա ապարատի հեղինակությունը բարձր պահելու պատրվակի տակ: Նման ձևով՝ ժամանակի խնայողության ու կեղծ միասնության քաղաքականության պատճառով [illegible] երկիրը կանգնեցրեցին [illegible]:

Վերակառուցումն այսօր կարևոր նվաճում է ձեռք բերել. ազատ բանավիճելու, ճշմարտությունը հրապարակայնորեն արտահայտելու դեմոկրատական ճանապարհին ենք ոտք դրել: Եվ պատահական չէ, որ համագումարի ամբիոնից հնչում են երբեմն շատ դառն, բայց ճշմարտությամբ առլեցուն մտքեր, որոնք տոգորված են ժողովրդի ճակատագրի հանդեպ անկեղծ մտահոգությամբ: Բայց ստեպ-ստեպ փորձում է իրեն ցույց տալ հինից եկած մտրակը, որը պիտակներ կպցնելով, ուզում է լռեցնել բանականության ձայնը:

Ես չեմ ուզում մոռանալ Ազգությունների խորհրդում ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների ընտրության հետ կապված բանավեճը: Համագումարի ամենաառողջ մասը, նաև ելույթ ունեցողներն անաչառ դիրքորոշմամբ նշեցին տվյալ հարցում արցախցիների իրավունքների ոտնահարումը:

Բոլորս մեծ հետաքրքրությամբ ու հուզմունքով ենք հետևում մեր հանրապետությունից ընտրված ժողովրդական դեպուտատների պահվածքին: Եվ պիտի նշել, որ քննարկված հարցերի շուրջը մտքերի փոխանակության ժամանակ նրանք դրսևորում են կազբունքայնություն, ակտիվ ու համարձակ դիրքորոշում:

Մեր ժողովրդի համար կարևոր ու արմատական հարցադրումներով էր հագեցած հատկապես դեպուտատ, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանի փաստարկված, խելամիտ և համարձակ ելույթը: Երկաթյա տրամաբանությամբ նա մերկացրեց այն մտայնությունը, թե Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին գոյություն ունեցող քարտեզի վերաձևում է նշանակում: Այո՛, եթե մենք արդարացնում ենք Ստալինի բռնատարիների անհատ զոհերին և վերականգնում նրանց վարկն ու իրավունքները, ապա ինչպե՞ս կարող ենք անտարբեր մնալ մի ամբողջ ժողովրդի բռնադատված իրավունքի հանդեպ: Չէ՞ որ Արցախի բռնակցումը Ադրբեջանին կամայականության դասական օրինակ է:

Սուրեն Հարությունյանի ելույթը մեզ համար չափազանց կարևոր է նաև մի այլ նկատառումով: Հայ ժողովուրդը միավորվում է վերից վար: Իր ղեկավարությունն հետ դառնում միասնական՝ ընդդեմ դոգմատիզմի, հանուն արդարության ու ճշմարտության, հանուն իրական վերակառուցման:

Դժվար է մի թղթակցության մեջ ամփոփել համագումարին ստացած իմ տպավորությունները: Հույսով սպասում ենք, որ ժողովրդի ընտրյալների առաջին համագումարը կընթանա ճշմարտության ու արդարության ուղիով, հիմքեր կստեղծվեն մեր երկրի տնտեսական ու քաղաքական կյանքի իրական վերակառուցման, ինչպես նաև դարաբաղյան հարցի արդարացի լուծման համար:

Կ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Միութենական նշանակության անհատական թոշակառու